«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-16-13-93

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(2019-2020 թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան «16» դեկտեմբերի 2019թ.

Հ/Հ	Միջոցառման բնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Հանդիպում	Առաջինկուրսեցիների հետ	02. 09	Յուրաքանչյուր ֆակուլտետի նախագահ, ինչպես նաև կենտրոնական ՈՒԳԸ նախագահը հանդիպեցին առաջինկուրսեցիների հետ, ներկայացրին ՈՒԳԸ նպատակները, խնդիրները և ընթացիկ կիսամյակում պլանավորվող ծրագրերը, մասնավորապես՝ մասնաճյուղում կայանալիք հանրապետական գիտաժողովը և «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը:
2.	Ինտելեկ-տուալ խաղ	«Ամենախելացին»	24. 09	Խաղին մասնակցում էին 9 ուսանող՝ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից: Խաղի համար հարցեր կազմելուն մասնակցել են նաև մի շարք ամբիոններ: Խաղի առաջին փուլն անցկացվեց բջջային հատուկ հավելվածի՝ Quizizz-ի օգնությամբ, տրվեց ընդհանուր զարգացվածությունն ստուգող 10 հարց, ընդ որում՝ մասնակիցները լրացուցիչ միավորներ էին վաստակում նաև հարցերին արագ պասասխանելու համար: Առավելագույն միավոր հավաքած 5 ուսանողները հնարավորություն ստացան խաղը շարունակել երկրորդ փուլում: Երկրորդ և երրորդ փուլերի համար «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը HTML, CSS և JavaScript լեզուների միջոցով ստեղծել էր համակարգչային հատուկ ծրագիր, որն էլ խաղի 2-րդ և 3-րդ փուլերը հնարավորինս մոտեցնում էր հեռուստախաղի ձևաչափին: Խաղի հաղթող Թինա Թամրազյանը պարգևատրվեց մեդալով, պատվոգրով և հուշանվերով: **Համագործակցություն՝ ՈւԽ, Հայոց լեզվի և գրականության, Հայոց պատմության և**

				հասարակագիտության, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոն
3.	Հանրապե-տական գիտաժողով	«Անկախության առաջնեկը»՝ նվիրված ԵՊՀ ԻՄ հիմնադրման 25-ամյակին	05. 10-06. 10	Հանրապետական ուսանողական գիտաժողովին մասնակցեցին 38 ուսանողներ՝ ՀՀ տարբեր բուհերից և մասնաճյուղից, ընդ որում՝ շուրջ 25-ը՝ այլ բուհերից: Առաջին օրը տեղի ունեցավ գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը. պլենար նիստին մասնակցում էին ԵՊՀ ԻՄ-ի տարբեր մասնագիտությունների ուսանողներ, դասախոսներ, ներկա էր Իջևան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Հայկ Ղալումյանը: Պլենար նիստից հետո գիտաժողովը շարունակվեց մասնագիտական 3 բաժանմունքներում՝ Տնտեսագիտության և բնական գիտությունների բաժանմունք, Պատմաիրավագիտության բաժանմունք, Հասարակական գիտությունների բաժանմունք (հայ և ռուս բանասիրություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, արվեստ): Այնուհետև բաժանմունքների ղեկավարներն իրենց կարծիքներն արտահայտեցին ուսանողների ներկայացրած զեկուցումների վերաբերյալ, տեղի ունեցավ հավաստագրերի հանձնման պաշտոնական արարողությունը: Այլ բուհերից ժամանած ուսանողների համար կազմակերպվեց շրջայց Իջևան քաղաքում, իսկ վերադարձից հետո՝ ինտելեկտուալ խաղ: Երկրորդ օրը նվիրված էր գիտաճանաչողական այցերին, որոնց շրջանակներում այլ բուհերի ուսանողները ՈՒԳԸ անդամների ուղեկցությամբ այցելեցին Իջևանի բուսաբանական այգի, Հաղարծնի և Գոշավանքի վանական համալիրներ: Ներկա պահին մասնակիցների աշխատանքների տպագրությունը «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում ընթացքի մեջ է: **Համագործակցություն՝ Իջևանի համայնքապետարան (տրամադրել է ֆինանսական աջակցություն), «Մարանի» սուպերմարկետ (տրամադրել է նյութական աջակցություն), ՀԷՑ Աղստևի մասնաճյուղ (տրամադրել է ֆինանսական աջակցություն)**
4.	Կինոդիտում	"Экзамен" գեղարվեստական ֆիլմ	07. 10	Դետեկտիվ-թրիլերի մեջ ներկայացվում էր մի քննություն, որին մասնակցում էին 10 հավակնորդ, իսկ նրանք ովքեր հաջող կհանձնեին այն,կընդունվեին աշխատանքի: Հավակնորդների խնդիրն էր պատասխանել ընդամենը 1 հարցի, բայց որն է այդ հարցը: Ուսանողները ֆիլմի ընթացքում տեսան ուշադիր լսելու կարևորությունը, թե ինչ

				սիմտոմներ կարող են առաջանալ քննության ընթացքում:
5.	Սեմինար	Մեքենայական ուսուցման վերաբերյալ	07. 11	2019թ. նոյեմբերի 7-ին ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետում կայացավ մեքենայական ուսուցման վերաբերյալ սեմինար-քննարկում, որը կազմակերպվել էր Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի տնօրեն Արմեն Նուրբենկյանի և ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի, ուսանողական կառույցների (ՈԻԳԸ, ՈԻԽ) համագործակցությամբ: Այն վարեց ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ Արամ Բուտավյանը: Բովանդակալից սեմինար-քննարկման ընթացքում ներկայացվեց, թե ինչ է մեքենայական ուսուցումը, և դրա ինչպիսի տեսակներ գոյություն ունեն: Խոսվեց յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունների և կիրառման ոլորտների մասին: Անդրադարձ կատարվեց նաև մեքենայական ուսուցման նախագծերի քայլերին, դրամավարկային քաղաքականության արձանագրությունների մեջ առավել հաճախ օգտագործվող բառերին, որը պարզում են հենց մեքենայական ուսուցման շնորհիվ: Վերջում ներկայացվեցին այնպիսի առցանց աղբյուրներ և դասընթացներ, որոնք կօգնեն ուսանողներին ավելի խորը ծանոթանալ այս ոլորտին: **Համագործակցություն՝ ՀՀ ԿԲ, ԵՊՀ ԻՄ ՈԻԽ**
6.	Մասնակ-ցություն	ՀՊՄՀ-ի ՈԻԽ հիմնադրման 25-ամյակին նվիրված բանավեճ խաղ՝ «12-ամյա կրթական համակարգն ապահովում է բարձրորակ կրթություն ՀՀ-ում» թեմայով	08. 11	ՀՊՀՄ ՈԻԽ-ն կազմակերպել էր բանավեճի համաբուհական առաջնություն, որին մասնակցում էին ՀՀ տարբեր բուհերի հավաքական թիմերը: Վիճակահանության արդյունքում պարզ դարձավ, որ ԵՊՀ ԻՄ-ի հավաքական թիմը (բաղկացած էր ՈԻԳԸ և ՈԻԽ անդամներից) բանավիճելու էր ՀՊՄՀ թիմի հետ: Պաշտպանելով կողմ դիրքորոշումը մասնաճյուղի թիմը կարողացավ շուրջ 15 միավորի առավելությամբ հաղթել բանավեճ-խաղը:
7.	Մասնակ-ցություն	ՀՊՄՀ-ի ՈԻԽ հիմնադրման 25-ամյակին նվիրված ինտելեկտուալ խաղ	08. 11	Բանավեճ խաղից հետո կազմակերպվեց ինտելեկտուալ խաղ՝ ԵՊՀ ԻՄ-ի թիմն (բաղկացած էր ՈԻԳԸ 5 անդամներից) ընդդեմ ՀՊՄՀ թիմի: Խաղն անցկացվեց 2 փուլով, ընդհանուր առմամբ տրվեց 20 հարց: Արդյունքում 14:6 հաշվով հաղթող ճանաչվեց մասնաճյուղի թիմը:
8.	Սեմինար-քննարկում-ների շարք	«Միկրոպրոցեսորներ ու միկրոկոնտրոլերներ» ու «Պատահական (Random) թվեր»	13. 11	Բնական գիտությունների ֆակուլտետում տեղի ունեցան սեմինար-քննարկումներ «Միկրոպրոցեսորներ ու միկրոկոնտրոլերներ» և «Պատահական (Random) թվեր» թեմաներով:

				ԻԿՄ 3-րդ կուրսի ուսանող Սարմեն Բեջանյանը ներկայացրեց "Միկրոպրոցեսորներ ու միկրոկոնտրոլերներ" թեման. խոսեց նրանց մասին, սահմանեց տարբերությունները, թվարկեց տեսակները, բերեց դրանց կիրառման տարբեր ոլորտներ, հիմնավորեց նրանց կարևորությունը ներկայիս մեքենայաշինության մեջ։ ԻԿՄ 3-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը ներկայացրեց «Պատահական (Random) թվեր» թեման։ Ներկայացրեց նրանց պատմությունն ու օգտագործումը մ.թ.ա. 24-րդ դարից մինչև մեր օրերը, խոսեց նրանց տեսակների մասին, բերեց կիրառման մի շարք ոլորտների օրինակներ, ցույց տվեց նրանց կիրառությունը ժամանակակից ծրագրավորման լեզուներում, տվեց պատահական թվերի միջոցով որոշակի մոտարկումով որոշյալ ինտեգրալի հաշվման բանաձևը՝ ծրագրային օրինակով։ Սեմինարն ընթացավ բուռն քննարկումների ուղեկցությամբ։ Արդյունքում ուսանողները ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները։ **Համագործակցություն՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԽ**
9.	Շախմատի առաջնութ-յուն	Կանանց և աղջիկների՝ շախմատի մասնաճյուղային առաջնություն	14. 11	Առաջնության մրցավարներն էին «ԻԿՄ» 4-րդ կուրսի ուսանող Գերասիմ Ալավերդյանը և «ԻԿՄ» 3-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը**:** Առաջնությունն ընթացավ շրջանաձև մրցակարգով (5 տուր)։ Մրցաշարում հաղթեց «ԻԿՄ» 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Միրզոյանը՝ ցուցաբերելով բացարձակ արդյունք (5 հաղթանակ)։ Մրցանակային տեղեր զբաղեցնողները պարգևատրվեցին պատվոգրերով, իսկ կազմակերպիչները՝ շնորհակալագրերով։ Կանանց և աղջիկների՝ շախմատի մասնաճյուղային առաջնության փոխանցիկ գավաթը մնաց Ս.Միրզոյանի մոտ։ **Համակործակցություն՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի Իջևանի մասնաճյուղ**
10.	Սեմինար	Բանավեճի ներբուհական առաջնության նախապատրաստական փուլ	22. 11	Մասնաճյուղ էր այցելել «Ռեֆորմ» բանավեճի ակումբի համակարգող Մելինե Գևորգյանը, ով հանդիպման մասնակիցներին հանգամանորեն ներկայացրեց բանավեճի բրիտանական դասական ձևաչափը, կանոնները, ինչպես նաև բանավեճի ասպարեզում իր ունեցած փորձը, պատասխանեց ուսանողներին հետաքրքրող

				հարցերին: **Համագործակցություն՝ «Ռեֆորմ» բանավեճի ակումբ**
11.	Առաջնություն	Բանավեճի ներբուհական առաջնություն	22. 11-20. 12	Առաջնությանը մասնակցում են մասնաճյուղի տարբեր ֆակուլտետներից 6 թիմեր՝ 5-ական մասնակիցներով: Արդեն կայացել են ¼ եզրափակիչ և կիսաեզրափակիչ փուլերը՝ ընդհանուր 6 բանավեճ-խաղ, որին մասնակցել են բոլոր թիմերը՝ 30 ուսանող: Խաղի դատավորներ են եղել ինչպես բանավիճելու փորձ ունեցող ուսանողներ, այնպես էլ՝ դասախոսներ: Եզրափակիչ՝ 7-րդ, բանավեճ-խաղը տեղի կունենա դեկտեմբերի 20-ին: Որպես դատավոր հրավիրված է նաև «Ռեֆորմ» բանավեճի ակումբի համահիմնադիր Մելինե Գևորգյանը: Հենց այդ օրը տեղի կունենա նաև առաջնության փակման արարողությունը, պատվոգրերի, շնորհակալագրերի հանձնումը: Առաջնության հաղթող թիմին տրվելու են պատվոգրեր, մեդալներ, գավաթ և Yell Extreme Park-ի կողմից տրված Via Ferara-ի՝ ժայռամագլցման 5 տոմս: Երկրորդ տեղն զբաղեցրած թիմին տրվելու են պատվոգրեր և մեդալներ, խրախուսական նվերներ, մնացյալ թիմերին կհանձնվեն պատվոգրեր: Սահմանված է նաև երկու անվանակարգ՝ «Լավագույն խոսնակ» և «Հանդիսատեսի համակրանք»: Անվանակարգերում հաղթած մասնակցին և թիմին նույնպես կտրվեն խրախուսական նվերներ և պատվոգրեր: **Համագործակցություն՝ «Ռեֆորմ» բանավեճի ակումբ, Yell Extreme Park**
12.	Շախմատի առաջնություն	Տղամարդկանց՝ շախմատի մասնաճյուղային առաջնություն	28. 11	Առաջնությանը մասնակցեցին տարբեր ֆակուլետներից ուսանողներ և աշխատակիցներ: Այն կազմակերպվել էր ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության անդամների, մասնավորապես՝ «ԻԿՄ» 4-րդ կուրսի ուսանող Գերասիմ Ալավերդյանի և «ԻԿՄ» 3-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանի կողմից: Առաջնությունը կայացավ շվեյցարական մրցակարգով (5 տուր), իսկ խաղի համար յուրաքանչյուրին տրվեց 15 րոպե խաղաժամանակ: Մրցանակային տեղեր զբաղեցնողները պարգևատրվեցին պատվոգրերով, իսկ կազմակերպիչները՝ շնորհակալագրերով:
13.	Կինոդիտում	«Սթիվ Ջոբս» գեղարվեստական ֆիլմ	03. 12	Բնական գիտությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «Սթիվ Ջոբս»

				գեղարվեստական ֆիլմի դիտումը: Ուսանողները ինֆորմացիա ստացան Ջոբսի կյանքի մասին, ծանոթացան նրա ուսանողական տարիների հետ, տեսան, թե ինչպես կարողացավ Սթիվ Ջոբսը իր երազած ու պատկերացրած կազմակերպությունը ավտոտնակից հասցնել այնտեղ, որտեղ որ այսօր է, ծանոթացան առաջին անհատական համակարգիչի՝ մաքինթոշի, պատմության հետ:
14.	Աշխատաժո-ղով	«Ես վստահում եմ իմ բուհին»	05. 12	Աշխատաժողովը, որը կազմակերպվել էր Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի նախաձեռնությանմբ և ՈւԳԸ օժանդակությամբ, մասնակցում էին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Հ. Մակարյանը, վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ: Որպես բանախոսներ ընդգրկված էին Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ Հ.Մովսեսյանը, Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ա.Մարդանյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Գ.Հարությունյանը, գրադարանի վարիչ Վ.Պողոսյանը, ՈւԳԸ նախագահ Հ. Ղարագյոզյանը, ՈւԳԸ փոխնախագահ Շ. Գասպարյանը, ՈւԳԸ անդամներ Գ. Հակոբյանը և Ն. Քամալյանը: Տեղի ունեցան ազատ քննարկումներ և երկու առցանց հարցում, որոնց ընթացքում աշխատաժողովի մասնակիցները փորձեցին գտնել հետևյալ հարցերի պատասխանները. • Ինչու՞ են երիտասարդները ցանկանում սովորել բուհում: • Ինչու՞ ուսանողը չի սովորում: • Ինչպե՞ս անել, որ նա սովորի: • Ինչու՞ է դասախոսը սովորեցնում, և որ՞ն է նրա մոտիվացիան: Ցուցադրվեց մոտիվացիոն փոքրիկ ֆիլմ, որից հետո ՄԿՈԱ բաժնի մասնագետ Ա.Հովսեփյանը ներկայացրեց դասախոսների շրջանում, իսկ ուսանողուհի Ս.Միրզոյանը՝ ուսանողների շրջանում իրականացված հետազոտության արդյունքները:
15.	Սեմինար-քննարկում-ների շարք	Նվիրված ԵՊՀ ԻՄ 25-ամյակին և Ծրագրավորման ամբիոնի ստեղծման 5-ամյակին	10.12	Դեկտեմբերի 10-ին Բնական գիտությունների ֆակուլտետում տեղի ունեցավ սեմինար-քննարկումների առաջին մասը՝ համանուն ֆակուլտետի ՈւԳԸ-ի ու Ծրագրավորման ամբիոնի վարիչ Գևորգ Սիմոնյանի նախաձեռնությամբ: Այն նվիրված էր մասնաճյուղի 25-ամյակին և ամբիոնի

				ստեղծման 5-ամյակին։ Ծրագրի ավարտից հետո ամբիոնի աջակցությամբ զեկույցները թարգմանվելու են ռուսերեն լեզվով և ուղարկվելու են ռուսական ամսագրի՝ տպագրվելու նպատակով։ ՔԿԳ 4-րդ կուրսի ուսանողուհի Դիանա Ներսիսյանը ներկայացրեց «Տարածական տվյալների և մետատվյալների ենթակառուցվածքների համակարգը և բովանդակությունը» թեման. տվեց տարածական տվյալների ու մետատվյալների սահմանումները, ներկայացրեց նրանց կառուցվածքը, ինչեր են դրանք պարունակում, օպտիմալ եղանակներ դրանք պահպանելու համար։ ԻԿՄ 4-րդ կուրսի ուսանող Գերասիմ Ալավերդյանը ներկայացրեց ««15» խաղի ծրագրային իրականացումը և կիրառությունը ուսման գործընթացում» թեման. ներկայացրեց GUI-ով մշակած խաղի ծրագիրը, ցույց տվեց լուծվող և անլուծելի դիրքերը տարբերակելու եղանակ, բացատրեց լուծման ալգորիթմներից մեկը, առաջարկեց տարբերակներ խաղը ուսման տարբեր պրոցեսներում օգտագործելու համար։ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Նելլի Դավթյանը ներկայացրեց «Տեխնոլորտը և մարդը» թեման։
16.	Մրցույթ	ԵՊՀ ԻՄ լավագույն ծրագրավորող 2019»	11.12	Դեկտեմբերի 11-ին Բնական գիտությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «ԵՊՀ ԻՄ լավագույն ծրագրավորող 2019» մրցույթը։ Մրցույթի մասնակիցները պետք է մեկ ժամվա ընթացքում գրեին 4 խնդիրների ծրագրային իրականացումները՝ C++ ծրագրավորման լեզվով։ Արդյունքում 3-րդ տեղը զբաղեցրեց ԻԿՄ 3-րդ կուրսի ուսանող Դավիթ Ստեփանյանը, 2-րդ հորիզոնականը զբաղեցրեց ԻԿՄ 3-րդ կուրսի ուսանողուհի Գենյա Հակոբյանը։ Պատվավոր առաջին հորիզոնականը զբաղեցրեց ԻԿՄ 2-րդ կուրսի ուսանող Վոլոդյա Մելքումյանը։
17.	Առաջնութ-յուն	Ինտելեկտուալ խաղի մասնաճյուղային առաջնություն	21.12.2019	Նախատեսվում է իրականացնել 1 խաղ, որին կմասնակցեն մասնաճյուղի տարբեր ֆակուլտետների ուսանողներից կազմված 6-8 թիմեր։ Խաղի ընթացքում կտրվեն տրամաբանությունը ստուգող, ինտելեկտուալ հարցեր։ Հաղթող թիմը կպարգևատրվի խրախուսական մրցանակով, պատվոգրով և գավաթով։

Մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահ՝ Հ.Ղարագյոզյան

քարտուղար՝ Ա. Բաղիյան